ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009, ք. Երևան, Կորյունի 17

N - Ն-5133
«21» հունիսի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Սիմոնյան,*

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թափուր տեղերում ընտրելու համար առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված անձանց թեկնածությունները.

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*վարչական պալատի 3 թափուր տեղի համար*)

1. Հրաչ Մարտունի Այվազյան
2. Արտակ Հայկազի Զեյնալյան
3. Լիանա Օնիկի Հակոբյան

1. Արթուր Ռոբերտի Առաքելյան
2. Արա Էդուարդի Բաբայան
3. Արծրուն Մարտունի Միրզոյան

1. Հակոբ Գրիգորի Գրիգորյան
2. Քրիստինե Պատվականի Մկոյան
3. Արթուր Ռոբերտի Պողոսյան

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար)*

1. Ռուբիկ Հրանտի Մխիթարյան
2. Արսեն Սերժիկի Նիկողոսյան
3. Արթուր Պարգևի Սարգսյան

1. Լուսինե Լևոնի Աբգարյան
2. Կարեն Սամվելի Բատիկյան
3. Սերգեյ Դիմիտրիի Չիչոյան

1. Հովհաննես Ռաֆիկի Ավագյան
2. Կարեն Ալբերտի Բիշարյան
3. Նելլի Նիկողոսի Հարությունյան

1. Լիլիթ Սոսի Գրիգորյան
2. Արտակ Արտաշեսի Կրկյաշարյան
3. Մուշեղ Պապիկի Հարությունյան

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (*հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար*)

1. Լիզա Ռաֆիկի Գրիգորյանի
2. Կարեն Հովհաննեսի Թումանյան
3. Լիպարիտ Ռոբերտի Մելիքջանյան

1. Արթուր Ռազմիկի Դավթյան
2. Նաիրա Գևորգի Հովսեփյան
3. Աղասի Արշակի Մկոյան

1. Լուսինե Աբոյի Ավագյան
2. Գևորգ Վանիկի Գյոզալյան
3. Վահե Վարուժանի Ռաֆայելյան:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թեկնածուներին Ազգային ժողովում կներկայացնի Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարը:

Կից ներկայացվում են Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 143-րդ հոդվածի 3-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները.

Առդիր՝ թիվ ԲԴԽ-62-Ո-165 որոշման օրինակը և թվով 10 փաթեթ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**      **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-62-Ո-165
2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի հունիսի 20-ին, դռնփակ նիստում, քննարկելով Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու, հաստատելու և Ազգային ժողովին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 133-րդ հոդվածի 10-րդ մասով, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի թիվ ՀՕ-24-Ն օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Կազմել և հաստատել Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները՝ համաձայն հավելվածի:

2. Ազգային ժողովին առաջարկել սույն որոշմամբ հաստատված անձանց թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թափուր պաշտոններում ընտրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**

**2022թ. հունիսի 20**
**ք. Երևան**

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2022 թվականի հունիսի 20-ի թիվ
ԲԴԽ-62-Ո-165 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ (ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏ)

| N | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ, ԾՆՆԴԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ՊԱՇՏՈՆ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՅՎԱԶՅԱՆ Հրաչ Մարտունի | 1974թ., Լոռու մարզ, գ. Օձուն | Վարչական դատարան | Դատարանի նախագահ |
| 2. | ԶԵՅՆԱԼՅԱՆ Արտակ Հայկազի | 1969թ., ք. Երևան | Իրավապաշտպան գործունեություն | Անհատ ձեռնարկատեր |
| 3. | ՀԱԿՈԲՅԱՆ Լիանա Օնիկի | 1976թ., ք. Երևան | Վերաքննիչ վարչական դատարան | Դատավոր |

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 16.12.2016 թվականի որոշման հավելվածի 95-րդ կետը՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի պաշտոնում առաջադրվելու վերաբերյալ:

**ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ**

**ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻՑ**

**ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐ,**

Հիմք ընդունելով 2022 մարտի 31-ին հրապարակված հայտարարությունը՝ Վճռաբեկ դատարանի Վարչական և Հակակոռուպցիոն պալատները համալրելու անհրաժեշտության վերաբերյալ, խնդրում եմ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 132-րդ և 133-րդ հոդվածների կարգով քննարկել իմ թեկնածությունը՝ վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի վարչական մասնագիտացման բաժնում ընդգրկելու համար:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ**

**15.04.2022թ.**

Ա 5685
15.04.22թ.



# ՏԵՂԵԿԱՆՔ

| | |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | Զեյնալյան Արտակ Հայկազի |
| Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը | 09.09.1969թ., ք. Երևան |
| Կրթությունը, ինչ է ավարտել և երբ | Բարձրագույն՝ Երեւանի «Գլաձոր» համալսարանի իրավաբանական ֆակուլտետ՝ բակալավրիատ՝ 2009թ., Կառավարման ակադեմիա՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մասնագետ՝ 2002թ., Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի օրդինատուրա՝ վիրաբույժ և առողջապահության կազմակերպիչ՝ 1999թ., Երևանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետ՝ 1996թ. |
| Մասնագիտությունը | Իրավագիտություն, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մասնագետ, վիրաբույժ և առողջապահության կազմակերպիչ |
| Մասնագիտական ստաժը | 22 տարի 0 ամիս 0 օր |
| Աշխատանքի վայրը | - |
| Զբաղեցրած պաշտոնը | Անհատ ձեռնարկատեր-իրավաբան |
| Ընտանեկան դրությունը | Ամուսնացած |
| Քանի երեխա ունի | Չորս երեխա |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 2000-2001թթ. | «Ժողովրդագրական-Առողջապահական Հետազոտություն» ծրագրի ղեկավար |
| 2000թ.-ին<br>2001թ.-ին | Կառավարության առընթեր Մարդասիրական օգնության հանձնաժողովի Առողջապահության, Հումանիտար ճանապարհով ստացվող բժշկական նշանակության ապրանքների վերագնահատող հանրապետական հանձնաժողովների ղեկավար |
| 2003թ.-ին | «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհուրդ»-ի անդամ |
| 2009-2011թթ. | «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգման» իրավապաշտպան հասարակական կազմակերպության անդամ |
| 2010թ.-ին | «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության փորձագետ |
| 2010թ.-ին | ՀՀ փաստաբանական պալատի գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրության հարցերի հանձնաժողովի նախագահ |
| 2011-2012թթ. | Փաստաբանների դպրոց՝ դասավանդող |
| 2011-2017թթ. | «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության «Խոսքի ազատություն, թե դեֆամացիա-որտեղ է հավասարակշռությունը» ծրագրի փորձագետ |
| 2015-2017թթ. | «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիր, նախագահ |
| 2016թ.-ին | «Արդարություն խմբի» անդամ |
| 2015-2017թթ. | «Ադրբեջանի Հանրապետության կողմից ռազմական միջամտության հետևանքով Արցախի և Հայաստանի քաղաքացիների իրավունքների |

| | |
|---|---|
| | պաշտպանություն» ծրագրի համակարգող, փորձագետ |
| 1998-2001թթ. | «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում ծրագրի փորձագետ |
| 1998-2001թթ. | Առողջապահության նախարարի տեղակալ |
| 1986-1998թթ. | Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ՝ սանիտար, բուժ եղբայր, բժիշկ |
| 2014-2017թթ. | Անհատ ձեռնարկատեր, իրավաբան |
| 2017թ.-ին | «Ելք» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով ԱԺ պատգամավոր |
| 12.05.2018-12.06.2019թթ. | Արդարադատության նախարար |
| 2001-2017թթ. | «Հանրապետություն» կուսակցության կենտրոնական գրասենյակի աշխատակազմի ղեկավար |
| 2019-2020թթ. | «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբան-կամավոր |
| 2019-2020թթ. | «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակ ՍՊԸ |
| 2020թ.-ից առ այսօր | Անհատ ձեռնարկատեր-իրավաբան |
| 2020թ.-ից առ այսօր | Իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ իրականացնում է Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված լայնամասշտաբ պատերազմի ընթացքում և դրան հաջորդած ժամանակահատվածում գերության մեջ հայտնված զինվորական ծառայողի և ձերբակալված քաղաքացիական անձանց իրավունքների |

խախտման զոհերի իրավունքների պաշտպանություն միջազգային ատյաններում և դատարաններում:
«Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ է: Նախագահի 20.09.1996թվականի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: ՀՀ փաստաբանների պալատի կողմից 2009 թվականին արժանացել է «Պալատի պատվավոր անդամ» կոչմանը: 2014 թվականին Հայաստանում արևմտյան մի շարք երկրների դեսպանությունների և ԵԱՀԿ գրասենյակի կողմից արժանացել է «2014թ. Համընդհանուր իրավունքների մրցանակ»-ի: 1990-1997թթ. կամավոր մասնակցել է Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանությանը՝ Նիկոլ-Դուման երկրապահ կամավորական ջոկատի կազմում:
1992թվականին վիրավորվել և կորցրել է ոտքը:

«20» հունիսի 2022թ.

N



հեռ. աշխ. ____________________

zeynalyanartak@gmail

Արտակ Ռաֆայելի Զեյնալյան
(անունը, հայրանունը, ազգանունը)

Անհատ ձեռնարկատեր
(աշխատավայրը)

Ներկայացված փաստաթղթեր.

- ☑ հայտ Բարձրագույն դատական խորհրդի անունով
- ☑ անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճեններ
- ☑ հինգ գունավոր լուսանկար 3x4սմ չափսի
- ☑ կենսագրական տվյալներ պարունակող քարտ
- ☑ նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն իր դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին
- ☑ իրավաբանական կրթություն՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ
- ☑ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ
- ☑ պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ
- ☑ պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր

- ☑ արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ
- ☑ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ
- ☑ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին
- ☐ առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության
- ☑ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր
- ☑ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ
- ☑ գրավոր հայտարարություն հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին
- ☑ տեղեկանք միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ
- ☐ տեղեկանք աշխատավայրից՝ վերջին երեք տարվա ընթացքում խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ չունենալու վերաբերյալ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու մասին:

---------------------------
(ստորագրություն)

ՔԱՐՏ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ

1. Արտակ Հայկազի Զեյնալյանս ծնվել եմ՝ 09.09.1969 թ, Երևանում

2. Կրթությունը, մասնագիտացում, վերապատրաստումներ

2009թ ավարտել եմ «Գլաձոր» կառավարման համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը.

2002թ ավարտել եմ ՀՀ Կառավարման ակադեմիան, ունեմ պետծառայողի որակավորում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մասնագետ եմ.

1999թ ավարտել եմ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի օրդինատուրան, վիրաբույժ եմ և առողջապահության կազմակերպիչ

1996թ ավարտել եմ ք. Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի Բուժական ֆակուլտետը.

1986թթ ավարտել եմ Քանաքեռի Խաչատուր Աբովյանի անվան № 84 միջնակարգ դպրոցը.

2004թ ԱՄՆ Պետ դեպարտամենտի «Միջազգային այցելուների» ծրագրի շրջանակներում մասնակցել եմ ԱՄՆ Նախագահական ընտրարշավին.

2014թ մասնակցել եմ «Արդարադատության ակադեմիայի» դասախոսների համար՝ «ՄԻԵԿ և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամրապնդումը Հայաստանում» թեմայով դասախոսություններին:

4. Աշխատանքային, հասարակական գործունեությունը

12.2020թ մինչ՝ օրս, աշխատում եմ անհատ ձեռնարկատեր-իրավաբան:

15.06.2019թ–12.2020թ աշխատել եմ «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակ ՍՊԸ-ում:

17.06.2019թ-2020թ կամավոր աշխատել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում, որպես իրավաբան:

2017թ «Ելք» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով ԱԺ պատգամավոր:

12.05.2018թ-12.06.2019թթ աշխատել եմ Հայաստանի արդարադատության նախարար:

2001-2017թթ աշխատել եմ «Հանրապետություն» կուսակցության կենտրոնական գրասենյակի ազխատակազմի ղեկավար:

2014-2017թթ աշխատել եմ անհատ ձեռնարկատեր-իրավաբան:

1998-2001թթ աշխատել եմ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ.

1986-1998թթ աշխատել եմ Միքաելյանի անվան վիրաբուժության ինստիտուտում, որպես սանիտար, բուժ եղբայր, բժիշկ:

2000-2001թթ ղեկավարել եմ «Ժողովրդագրական-Առողջապահական Հետազոտություն» ծրագիրը՝ իրականացվող ՀՀ առողջապահության նախարարության և ԱՄՆ «MAKRO internacional inc.» կազմակերպության հետ համատեղ «Ընտանիքի առողջության պահպանման հաղորդակցության ծրագիրը»՝ իրականացվող Ջոնս Հոփկինս համալսարանի Բնակչության հետ հաղորդակցման ծառայությունների Հայաստանի մասնաճյուղի հետ:

2000թ ղեկավարել եմ ՀՀ կառավարությանն առընթեր Մարդասիրական օգնության հանձնաժողովի Առողջապահության, Հումանիտար ճանապարհով ստացվող բժշկական նշանակության ապրանքների վերազննահատող հանրապետական հանձնաժողովները.

1999թ, 2003թ, 2007թ, 2017թ, 2018թ, 2021թ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել եմ պատգամավորության թեկնածու՝ համամասնական ընտրակարգով:

2009թ, 2018թ Երևան քաղաքի ավագանու ընտրություններում առաջադրվել եմ ավագանու թեկնածու:

2010թ նշանակվել եմ ՀՀ փաստաբանների պալատի Գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ:

1993թ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ եմ:

2001թ անդամագրվել եմ «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհրդին»:

2003թ անդամագրվել եմ «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգման» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը:

2011թ հիմնադրել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և՝ նախագահել, մինչև՝ 2017թ ապրիլը:

2011թ-2012 թ. «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Խոսքի ազատությու՞ն, թե դեֆամացիա-որտե՞ղ է հավասարակշռությունը» ծրագրի փորձագետ:

2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության՝ մենթորություն» ծրագրի փորձագետ, ստրատեգիական դատավարությունների իրականացման իրավաբան-փորձագետ:

2015թ-2017թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում Իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում» ծրագրի փորձագետ:

2015թ-2017թ մի շարք ճանաչված և հեղինակավոր իրավապաշտպանների կողմից հիմնադրված «Արդարություն խմբի» անդամ:

2009-2011թթ աշխատել եմ «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ փորձագետ:

2016թ – համակարգել եմ «Ադրբեջանի Հանրապետության կողմից ռազմական միջամտության հետևանքով Արցախի և Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանություն» ծրագիրը և եղել փորձագետ:

2020թ – Իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ իրականացնում ենք Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված լայնամասշտաբ պատերազմի ընթացքում, դրան հաջորդած ժամանակահատվածում գերության մեջ հայտնված զինվորական ծառայողի և ձերբակալված քաղաքացիական անձանց, իրավունքի խախտման զոհերի իրավունքների պաշտպանություն՝ միջազգային ատյաններում, այդ թվում՝ դատական: Մեր դիմումների հիման վրա Եվրոպական դատարանը ավելի քան 100 որոշում է կայացրել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ, որով Ադրբեջանի կառավարությանը պարտավորեցրել է, պահանջել է փաստաթղթավորված տեղեկություն՝ նրանց գերեվարման փաստի, գտնվելու վայրի, պահման պայմանների և բժշկական սպասարկման, նրանց հայրենադարձման վերաբերյալ: Միևնույն ժամանակ 09.03.2021թ Եվրոպական դատարանը մեր դիմումների հիման վրա որոշել է՝ Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց իրավունքների ոտնահարումների խնդրի մասին ծանուցել ԵԽ Նախարարների կոմիտեին:

2010թ դասավանդել եմ՝ Փաստաբանների դպրոցում և Փաստաբանների պալատում:

Դատական ներկայացուցչություն սկսել եմ իրականացնել 2001թ վարչական կալանքների վարույթներում, Սահմանադրական դատարանում ներկայացությունը սկսել եմ իրականացնել 2003թ ընտրական վեճերով:

Հեղինակել (համահեղինակ) և իրականացրել եմ տասնյակ նախադեպային դատական ակտերի հիմքում ընկած ստրատեգիական դատավարություններ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, ավելի քան՝ 60 որոշումների հիմքում ընկած դիմումներ.

Վարչական դատարանի մի քանի հարյուր վճիռների հիմքում ընկած հայցերի, Վճռաբեկ դատարանի տասնյակ նախադեպային որոշումների հիմքում ընկած որոշումների, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված և ընթացքում գտնվող, ավելի քան՝ 600 գանգատների հեղինակ ու համահեղինակ եմ[1]:

5. Օտար լեզուների իմացությունը

ռուսերենին, ֆրանսերեն

6. Գիտական աստիճանը, գիտական կոչումը, տպագրված աշխատանքները, իրավաստեղծ գործունեությունը

Գիտական աստիճան և կոչում չունեմ, սակայն իմ հեղինակած տասնյակ թեզեր հաստատվել, կյանքին են կոչվել և կիրառվում են, դրանք կարող է գնահատվել, որպես առողջապահության, կառավարման, իրավագիտության ոլորտներում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ էական նվաճում:

«Մարդուն օրգանների փոխպատվաստման մասին», «Մարդու վերարտադրողության արհեստական մեթոդների իրականացման մասին», «Արյան, դրա ձևավոր տարրերի դոնորության մասին», «Բնակչության կանխարգելիչ պատվաստումների մասին» ՀՀ օրենքների նախագծերի, մի շարք գործող օրենքներում («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Լիցենզավորման մասին» և այլն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության տասնյակ որոշումների («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»; «Դեղերի մասին» ՀՀ օրենքներից բխող), Գերատեսչական նորմատիվ (գրանցված) ակտերի, ՀՀ առողջապահության նախարարության բազմաթիվ հրամանների հեղինակ ու համահեղինակ եմ:

Գիտական մի քանի տպագրված աշխատանքների («Առողջապահության համակարգը և դրա բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» Հայաստան 2020 զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան 2002 և այլն) և զեկույցների («Human Rights in the OSCE Region: Europe, Central Asia and North America, Report 2004 (Events of 2003); Annualreport on human rights in Armenia for the year of 2004 (2008, 2009, 2010) prepared by Helsinki Association»-ի) հեղինակ ու համահեղինակ եմ:

---

[1] https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-212965%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-200439%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-192087%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-121176%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-201739%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-168830%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182276%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182155%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-169756%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-181084%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-179930%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-199347%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-195059%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-173883%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-150495%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-159648%22]}

«Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները» աշխատության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան, Ա.Գրիգորյան.- Երևան.: Ասողիկ, 2011. 208 էջ.):

«Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում հատոր I Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնած դատական գործերի վերլուծություն» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան, Տ.Մատինյան. – Վանաձոր.: 2011:, 412 էջ:

«ՀՀ սահմանադրական դատարան և մարդու իրավունքների Եվրոպական դատական ներկայացված գրավոր մեկնաբանությունների (amicus curiae)» ժողովածուի համահեղինակ եմ (Գ. Մարգարյան, Ի. Փիլոյան, Ա. Զեյնալյան, Վ. Գրիգորյան, Լ. Սահակյան, Եր. Վարոսյան - Երևան.: Ասողիկ, 2012. 84 էջ):

«Զրպարտության և վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան. – Երևան.: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, 2012. 53 էջ:

«Զրպարտություն և վիրավորանք» լրագրողների և փաստաբանների համար ձեռնարկի համահեղինակ եմ (Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2014. 46 էջ):

«Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերը և պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում. Կարիքների գնահատում» հետազոտության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2015. 76 էջ):

Հեղինակել եմ «Արդարադատության ակադեմիայի» ուսումնական մի քանի մոդուլներ, այդ թվում՝ «Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպային իրավունքը վարչական գործերով» ուսումնական մոդուլը:

7. Պետական պարգևներ և մրցանակներ

ՀՀ նախագահի 20.09.1996թ հրամանագրով արժանացել է «Արիության համար» մեդալի:

Արժանացել եմ բազմաթիվ Կառավարական, Գերատեսչական, Գերատեսչական-Միջազգային և ոչկառավարական կազմակերպությունների զանազան պարգևատրումների պատվոգրերի, շնորհակալագրերի, այդ թվում՝

2011թ «Ամալյա Կոստանյանի անվան մրցանակի»՝ սկզբունքային ու խիզախ գործունեության և քաղաքացիական հասարակության զարգացման գործում նշանակալի ներդրման համար, Տեղեկատվության ազատության մրցանակաբաշխության ժյուրիի կողմից ճանաչվել է 2006 թվականին տեղեկատվություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած քաղաքացի, իսկ 2013 թվականին՝տեղեկատվության ազատության խախտված իրավունքի համար ամենահամառ ու հետևողական պայքարող իրավապաշտպանը և արժանացել եմ Ոսկե բանալի մրցանակների:

2009թ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը՝ իրավապաշտպան գործունեության բնագավառում մեծ վաստակի համար, շնորհել է «Պալատի պատվավոր անդամի» կոչում:

2014թ Հայաստանում արևմտյան մի շարք երկրների դեսպանությունների և ԵԱՀԿ-ի գրասենյակի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նշանակալից ջանքերի համար արժանացել եմ «2014թ Համընդհանուր իրավունքների մրցանակի»:

2016թ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից արժանացել եմ «Տարվա իրավապաշտպան» տիտղոսին:

8. Առնչությունը զինվորական ծառայության հետ

1987-1989թթ ծառայել եմ խորհրդային բանակում,

1990-1997թթ կամավոր մասնակցել եմ Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանությանը՝ Նիկոլ-Դուման երկրապահ կամավորական ջոկատի կազմում,

1992թ վիրավորվել եմ՝ կորցրել եմ ոտքը:

9. Ընտանեկան դրությունը

| | | |
|---|---|---|
| Մայրս | - Օֆելյա Զարզանդի Տոնայան, | ծնվել է՝ 29.11.1946թ, |
| Կինս | - Լիլիթ Արժանիկի Մուսեյան, | ծնվել է՝ 02.01.1972թ, |
| Որդիս | - Հայկ Արտակի Զեյնալյան, | ծնվել է՝ 31.03.1991թ, |
| Դուստրս | - Նանե Արտակի Զեյնալյան, | ծնվել է՝ 10.11.1993թ, |
| Դուստրս | - Մանան Արտակի Զեյնալյան, | ծնվել է՝ 16.03.2001թ, |
| Որդիս | - Վահագն Արտակի Զեյնալյան, | ծնվել է՝ 12.12.2005թ, |
| Թոռս | - Արեգ Հայկի Զեյնալյան, | ծնվել է՝ 18.11.2016թ, |
| Թոռս | - Արտակ Հայկի Զեյնալյան, | ծնվել է՝ 08.07.2021թ: |

Արտակ Զեյնալյան

14.04.2022թ, ք. Երևան:

**Նոտարական ակտի կոդ:** 510-20220412-218-5825167
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 2GM8NJ

**ԵՐԴՄԱՆ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ**
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար քսաներկու թվականի ապրիլի տասներկուսին

Ես՝ **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՋԵՅՆԱԼՅԱՆՍ**, ծնված՝ 09/09/1969թ-ին, ՀԾՀ՝ նույնականացման քարտ՝ հաշվառված՝ ԲՆԱԿԱՐԱՆ, հավաստիացնում եմ, որ իմ կողմից երկու հազար քսաներկու թվականի ապրիլի տասներկուսին արված, ստորագրված և ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանի կողմից երկու հազար քսաներկու թվականի ապրիլի տասներկուսին թիվ 2019 գրանցմամբ վավերացված հայտարարությունը ճշմարտացի է:

Սույն երդման հավաստիացմամբ հաստատում եմ, որ տեղյակ եմ կեղծ երդում տալու դեպքում քրեական պատասխանատվության մասին:

Ստորագրություն

Մենք՝ վկաներ **ԱՐԱՔՍ ՌՈՒԲԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՍ**, ծնված՝ 14/07/1989թ-ին, ՀԾՀ՝ նույնականացման քարտ՝ հաշվառված՝

, **ՆԵԼԼԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆՍ**, ծնված՝ 08/10/1998թ-ին, ՀԾՀ՝ նույնականացման քարտ՝ հաշվառված՝ ԲՆԱԿԱՐԱՆ, հավաստում ենք, որ հայտարարությունը և երդման հավաստիացումը կատարվել են մեր ներկայությամբ **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՋԵՅՆԱԼՅԱՆԻ** կողմից, որի համար ստորագրում ենք:

Ստորագրություններ

12/04/2022 թվականին ես՝ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանս, հաստատում եմ **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՋԵՅՆԱԼՅԱՆԻ** կողմից կատարված բանավոր հայտարարությունը, որն արվել և ստորագրվել է իմ ներկայությամբ և հավաստվում է վերջինիս կողմից 12/04/2022 թվականին վկաներ **ԱՐԱՔՍ ՌՈՒԲԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ և ՆԵԼԼԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ** ներկայությամբ տրված երդման հավաստիացմամբ:

Հայտարարությունն արած անձի և վկաների ինքնությունը և գործունակությունը ստուգված են։

Համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.2 հոդվածի՝ նոտարի հաստատած բանավոր հայտարարություններն ապացուցողական ուժ ունեն դատարանում և այլ պետական մարմիններ ներկայացնելիս:

Գրանցված է գրանցամատյանում 2010 -ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վանինե Հովսեփյան

**Նոտարական ակտի կոդ:** 510-20220412-66-5825129
**Նոտարական ակտի գաղտնագիր:** Q1BEYW

**Համապատասխան մարմիններին**
ՀՀ քաղաքացի **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՉԵՆԿԱԼՅԱՆԻՑ**, ծնված՝ 09/09/1969թ-ին, ՀԾՀ՝

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար քսաներկու թվականի ապրիլի տասներկուսին

Ես՝ ՀՀ քաղաքացի **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՉԵՆԿԱԼՅԱՆՍ,** հայտնում եմ, որ առ 12/04/2022 թվականը սնանկ չեմ ճանաչվել և դատվածություն չունեմ, որի համար ստորագրում եմ:

Ստորագրություն՝ Արտակ Հայկազի Չենկալյան
Ծանոթացա հայտարարությանը:
Արտակ

12/04/2022 թվականին ես՝ Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանս, վավերացնում եմ քաղ. **ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՉԵՆԿԱԼՅԱՆԻ** ստորագրության իսկությունը, որը կատարվել է իմ ներկայությամբ:
Փաստաթուղթը ստորագրողի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի համաձայն հաստատում եմ ֆիզիկական անձի կողմից կատարված ստորագրության իսկությունը, այլ ոչ թե փաստաթղթում շարադրված փաստերը:
ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ՝ 2019-ով

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար մեկ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վանինե Ժորայի Հովսեփյան


ВАНИНЕ ЖОРАЕВНА
VANINE
NOTARY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*Երևանի «Գլաձոր» համալսարան*

(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

# ԴԻՊԼՈՄ

AB № 082042

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ *2009* ԹՎԱԿԱՆԻ

*մայիսի 25-ի* ՈՐՈՇՄԱՄԲ

*ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ*

(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է

*իրավագիտության*

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԱՍՏԻՃԱՆ

*«Իրավագիտություն»*

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

«05» [illegible] 2009թ. ք. *Երևան* Գրանցման № *20*

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

© [illegible] 2009

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

*Ереванский университет "Гладзор"*

(наименование высшего учебного заведения)

# ДИПЛОМ

AB № 082042

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ

от *25 мая 2009* года

*ЗЕЙНАЛЯНУ АРТАКУ АЙКАЗОВИЧУ*

(фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ БАКАЛАВРА

*правоведения*

ПО СПЕЦИАЛЬНОСТИ *"Правоведение"*

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

[illegible] 2009 г. г. *Ереван* Регистрационный № *20*

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

REPUBLIC OF ARMENIA

*Yerevan Gladzor University*

(higher educational establishment)

# DIPLOMA

AB № 082042

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF

*25 May 2009*

*ARTAK ZEYNALYAN*

(first name, last name)

IS AWARDED THE BACHELOR'S DEGREE

*of Laws*

IN THE FIELD OF *"Law"*

Chairman of the State Examination Commission

Rector

"*05*" [illegible] *2009* c. *Yerevan* Registration № *20*

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

# ԱՏԵՍՏԱՏ

## ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ

[illegible] Զաքարյան Գևորգյան Արթուր

[illegible] 89 [illegible] ծնվել է ... Հայկ.

քաղ. Երևան

... 19 86 թվականին ավարտել է

Երևանի Խ. Աբովյանի

անվան № 84 միջնակարգ

[illegible] օրինակելի

[illegible]

| | |
|---|---|
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 5 (գերազանց) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |

5 ... 5

| | |
|---|---|
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 5 (գերազանց) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 4 (լավ) |
| [illegible] | 5 (գերազանց) |

[illegible]

[illegible] Սահակյան [illegible]

[illegible] Երևան

AB № 927517

# АТТЕСТАТ

## о среднем образовании

Настоящий аттестат выдан Зақарьяну
(фамилия)

Артуру Гарегиновичу
(имя и отчество)

родившемуся в г. Ереван
(город, село,

Арм. ССР 19[illegible] года,
района, республики)

в том, что он в 1986 году окончил полный

курс Ереванской ср. шк. № 84
(полное наименование школы

им. Х. Абовяна
и место ее нахождения)

и при примерном поведении обнаружил следующие знания:

| | |
|---|---|
| по армянскому языку | 4 (хорошо) |
| по армянской литературе | 4 (хорошо) |
| по русскому языку | 4 (хорошо) |
| по русской литературе | 5 (отлично) |
| по алгебре и началам анализа | 4 (хорошо) |
| по геометрии | 4 (хорошо) |
| по истории СССР | 4 (хорошо) |
| по всеобщей истории | 4 (хорошо) |
| по истории армянского народа | 4 (хорошо) |
| по обществоведению | 4 (хорошо) |
| по географии | 4 (хорошо) |
| по физике | 4 (хорошо) |
| по астрономии | 4 (хорошо) |
| по химии | 4 (хорошо) |
| по биологии | 5 (отлично) |
| по иностранному языку (англ.) | 4 (хор) |
| по физической культуре | 4 (хор) |
| по трудовому обучению | 4 (хор) |
| по начальной военной подготовке | 5 (отл) |

Кроме того, выполнил программу по черчению, изобразительному искусству, пению и музыке, а также изучил факультативный курс ...

Директор школы [signature]

Заместитель директора [signature]

Учителя:

1. [signature]

Выдан „26“ И 1986 г.

г. Ереван

М. П.

UNIVERSE
LANGUAGE AND TRAINING CENTRE

# ՎԿԱՅԱԳԻՐ

Տրվում է

***Արտակ Հայկազի Չելնակյանին***

առ այն, որ նա «Յունիվերս» լեզվի կենտրոնում հաջողությամբ հանձնել է ռուսերենի իմացությունը ստուգող B1 մակարդակի թեստը:

12.04.2022 «Տաթև» գիտակրթական համալիր «Յունիվերս» ԼԿ տնօրեն՝ Ք. Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

# ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄԻ
# ՎԿԱՅԱԳԻՐ

Շնորհվում է

## ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻՆ

իրավապաշտպան գործունեության բնագավառում

մեծ վաստակի համար:

Պալատի նախագահ Ռուբեն Սահակյան

28 դեկտեմբերի 2009թ.

Fédération Internationale des Ligues des Droits de l'Homme

ORGANISATION INTERNATIONALE NON GOUVERNEMENTALE AYANT STATUT CONSULTATIF AUPRES DES NATIONS UNIES, DE L'UNESCO, ET DU CONSEIL DE L'EUROPE ET D'OBSERVATEUR AUPRES DE LA COMMISSION AFRICAINE DES DROITS DE L'HOMME ET DES PEUPLES

INTERNATIONAL FEDERATION FOR HUMAN RIGHTS

FEDERACION INTERNACIONAL DE LOS DERECHOS HUMANOS

الفدرالية الدولية لحقوق الانسان

Artak Zeynalyan
zartak69@yahoo.com
+37491 193526

May 21, 2010

Dear Mr. Zeynalyan,

In the name of FIDH's 37[th] Congress, I would like to thank you for your participation in the FIDH Forum, and particularly in its Panel III on April 7[th], which was much appreciated.

I do hope that the Forum that we had a chance to hold in Yerevan, as well as all the related activities, including the meetings with the victims of human rights violations you personally represent, participated in the promotion of human rights in the Republic of Armenia and permitted to positively enlarge the discussion, share experiences and define the best practices and strategies for victims of human rights violations seeking recognition of their rights. Indeed, the number, professionalism and diversity of speakers and participants, including key representatives of international and regional courts, constituted key elements for the success of the Forum. Even if this is a long term struggle, the fact the the human rights violations of the past years in Armenia became a subject of debate on the national and international levels, is, in our eyes, a positive dynamic.

We will be pleased to transmit to you a full report of the Forum "Justice: New Challenges" as soon as it is finalised. If you have a written copy of your intervention, don't hesitate to transmit it to us so that we can include it in the full report we are working on.

Indeed, our interest in the situation in your country doesn't end with the end of the Congress. We will do our best to further contribute to the improvement of the human rights record and the respect of the Rule of Law in Armenia. The profound interest our organisation has in this region and the situation in your country was once again demonstrated at the FIDH World Congress in April 2010, when Mr. Artak Kirakosyan, Chairman of the Board of our member organisation CSI, was elected as Secretary General of FIDH, and therefore joined its International Board. We are sure, that this honourable position and his related activities will reinforce and enlarge our activities in the region and will contribute to our constructive cooperation.

Yours sincerely,

Souhayr BELHASSEN
President of FIDH

Arman DANIELYAN
President of CSI

Artak KIRAKOSYAN
Chairman of the CSI Board
Secretary General of FIDH

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի
14 մայիսի 2010թ.
ՈՐՈՇՈՒՄ թիվ 15-Ա

(Գիտա-վերլուծական կենտրոնի հանձնաժողովների
նախագահներին նշանակելու մասին)

Հիմք ընդունելով "Փաստաբանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 2-րդ կետի և "Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի" կանոնակարգի 9-րդ կետի պահանջները,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Գիտա-վերլուծական կենտրոն) համակարգողի առաջարկությունը,

ո ր ո շ ե ց ի՝

- Գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ նշանակել իրավաբան Արտակ Զեյնալյանին.
- Գիտա-վերլուծական կենտրոնի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ նշանակել փաստաբան Վահե Գրիգորյանին.
- Գիտա-վերլուծական կենտրոնի Նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ նշանակել փաստաբան Գևորգ Գյոզալյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահի պաշտոնակատար Արա Զոհրաբյան

# Տեղեկանք

## վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնին հավակնող թեկնածու Արտակ Զեյնալյանի մասնագիտական աշխատանքի փորձառության վերաբերյալ

2014-2017թթ, ապա՝ 12.2020թ մինչ՝ օրս, աշխատում եմ անհատ ձեռնարկատեր-իրավաբան:

12.05.2018թ-12.06.2019թթ աշխատել եմ Հայաստանի արդարադատության նախարար:

2011թ հիմնադրել եմ «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և՝ նախագահել, մինչև՝ 2017թ ապրիլը, ապա՝ 17.06.2019թ-2020թ կամավոր աշխատել եմ որպես իրավաբան:

2011թ-2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Խոսքի ազատությու՞ն, թե դեֆամացիա-որտե՞ղ է հավասարակշռությունը» ծրագրի փորձագետ:

2012թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության՝ մենթորություն» ծրագրի փորձագետ, ստրատեգիական դատավարությունների իրականացման իրավաբան-փորձագետ:

2014թ մասնակցել եմ «Արդարադատության ակադեմիայի» դասախոսների համար՝ «ՄԻԵԿ և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամրապնդումը Հայաստանում» թեմայով դասախոսություններին:

2010թ նշանակվել եմ ՀՀ փաստաբանների պալատի Գիտա-վերլուծական կենտրոնի Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ:

2010թ դասավանդել եմ՝ Փաստաբանների դպրոցում և Փաստաբանների պալատում:

2015թ-2017թ «Իրավունքի գերակայություն» հ/կ-ի՝ «Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում Իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում» ծրագրի փորձագետ:

2015թ-2017թ մի շարք ճանաչված և հեղինակավոր իրավապաշտպանների կողմից հիմնադրված «Արդարություն խմբի» անդամ:

2009-2011թթ աշխատել եմ «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ փորձագետ:

2016թ – համակարգել եմ «Ադրբեջանի Հանրապետության կողմից ռազմական միջամտության հետևանքով Արցախի և Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանություն» ծրագիրը և եղել փորձագետ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան է ներկայացվել շուրջ 700 քաղաքացու անունից՝ 390 գանգատ[1]:

---

[1] http://armversion.am/2017/02/14/%D5%A1%D5%BA%D6%80%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB/?fbclid=IwAR0pUNvdLnRSljF2fC9MYOod2CqWQhtyS5FcRcFJG9y8GMki02s-mkQv77I

2020թ – իրականացնում եմ[2] Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված լայնամասշտաբ պատերազմի ընթացքում, դրան հաջորդած ժամանակահատվածում գերության մեջ հայտնված զինվորական ծառայողի և ձերբակալված քաղաքացիական անձանց, իրավունքի խախտման զոհերի իրավունքների պաշտպանություն՝ միջազգային ատյաններում, այդ թվում՝ դատական: Մեր դիմումների հիման վրա Եվրոպական դատարանը ավելի քան 100 որոշում է կայացրել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ, որով Ադրբեջանի կառավարությանը պարտավորեցրել է, պահանջել է փաստաթղթավորված տեղեկություն՝ նրանց գերեվարման փաստի, գտնվելու վայրի, պահման պայմանների և բժշկական սպասարկման, նրանց հայրենադարձման վերաբերյալ: Միևնույն ժամանակ 09.03.2021թ Եվրոպական դատարանը մեր դիմումների հիման վրա որոշել է՝ Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց իրավունքների ոտնահարումների խնդրի մասին ծանուցել ԵԽ Նախարարների կոմիտեին:

2003թ անդամագրվել եմ «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգման» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը:

2001թ անդամագրվել եմ «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհրդին»:

Դատական ներկայացուցչություն սկսել եմ իրականացնել 2001թ վարչական կալանքների վարույթներում, Սահմանադրական դատարանում ներկայացուցչություն սկսել եմ իրականացնել 2003թ ընտրական վեճերով:

Հեղինակել (համահեղինակ) և իրականացրել եմ տասնյակ նախադեպային դատական ակտերի հիմքում ընկած ստրատեգիական դատավարություններ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, ավելի քան՝ 60 որոշումների հիմքում ընկած դիմումներ. Վարչական դատարանի մի քանի հարյուր վճիռների հիմքում ընկած հայցերի, Վճռաբեկ դատարանի տասնյակ նախադեպային որոշումների հիմքում ընկած որոշումների, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված և ընթացքում գտնվող, ավելի քան՝ 600 գանգատների հեղինակ ու համահեղինակ եմ[3]:

---

[2] Իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ՝ համատեղ:

[3] https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-212965%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-200439%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-192087%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-121176%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-201739%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-168830%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182276%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-182155%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-169756%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-181084%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-179930%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-199347%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-195059%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-173883%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-150495%22]}
https://hudoc.echr.coe.int/rus#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-159648%22]}

Մանվել Սարիբեկյանի, Կարեն Պետրոսյանի, Մանիկոն Խոջոյանի իրավունքների Ադրբեջանի Հանրապետության կողմից խախտման փաստը հաստատող ՄԻԵԴ գործերով շահերի պաշտպան:

Թեև գիտական աստիճան և կոչում չունեմ, սակայն իմ հեղինակած տասնյակ թեզեր հաստատվել, կյանքին են կոչվել և կիրառվում են, դրանք կարող է գնահատվել, որպես առողջապահության, կառավարման, իրավագիտության ոլորտներում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ էական նվաճում:

«Մարդուն օրգանների փոխպատվաստման մասին», «Մարդու վերարտադրողության արհեստական մեթոդների իրականացման մասին», «Արյան, դրա ձևավոր տարրերի դոնորության մասին», «Բնակչության կանխարգելիչ պատվաստումների մասին» ՀՀ օրենքների նախագծերի, մի շարք գործող օրենքներում («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Լիցենզավորման մասին» և այլն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության տասնյակ որոշումների («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»; «Դեղերի մասին» ՀՀ օրենքներից բխող), Գերատեսչական նորմատիվ (գրանցված) ակտերի, ՀՀ առողջապահության նախարարության բազմաթիվ հրամանների հեղինակ ու համահեղինակ եմ:

Գիտական մի քանի տպագրված աշխատանքների («Առողջապահության համակարգը և դրա բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» Հայաստան 2020 զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան 2002 և այլն) և զեկույցների («Human Rights in the OSCE Region: Europe, Central Asia and North America, Report 2004 (Events of 2003); Annualreport on human rights in Armenia for the year of 2004 (2008, 2009, 2010) prepared by Helsinki Association»-ի) հեղինակ ու համահեղինակ եմ:

«Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները» աշխատության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան, Ա.Գրիգորյան.- Երևան.: Աստղիկ, 2011. 208 էջ:):

«Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում հատոր I Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնած դատական գործերի վերլուծություն» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան, Տ.Մատինյան. – Վանաձոր.: 2011, 412 էջ:

«ՀՀ սահմանադրական դատարան և մարդու իրավունքների Եվրոպական դատական ներկայացված գրավոր մեկնաբանությունների (amicus curiae)» ժողովածուի համահեղինակ եմ (Գ. Մարգարյան, Ի. Փիլոյան, Ա. Զեյնալյան, Վ. Գրիգորյան, Լ. Սահակյան, Եր. Վարոսյան - Երևան.: Աստղիկ, 2012. 84 էջ):

«Զրպարտության և վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ» աշխատության համահեղինակ եմ / Ա. Ղազարյան, Ա. Զեյնալյան. – Երևան: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, 2012. 53 էջ:

«Զրպարտություն և վիրավորանք» լրագրողների և փաստաբանների համար ձեռնարկի համահեղինակ եմ (Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2014. 46 էջ):

«Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերը և պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում. Կարիքների գնահատում» հետազոտության համահեղինակ եմ (Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան - Երևան.: 2015. 76 էջ):

Հեղինակել եմ «Արդարադատության ակադեմիայի» ուսումնական մի քանի մոդուլներ, այդ թվում՝ «Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպային իրավունքը վարչական գործերով» ուսումնական մոդուլը:

## Որոշ նշանակալի գործերը և արդյունքները

1. Սպառողներն ընդդեմ «Ա1+» և «Նոյյան Տապան» հեռուստաընկերությունների գործով (քաղ. գործ 02-1809) դիմող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող շուրջ 800 քաղաքացիների ներկայացուցիչ՝ ընդհանուր իրավասության դատարաններում:

   Գործը նախաձեռնվել էր «Ա1+» և «Նոյյան Տապան» հեռուստաընկերությունների 8 հեռուստադիտողների կողմից (որից մեկը Ա. Զեյնալյանն էր), ովքեր վիճարկում էին ազատ հեռուստաընկերություններին եթերազրկելու մասին վարչական ակտերի իրավաչափությունը: Գործով առաջին անգամ 800 այլ սպառողներ ներգրավվեցին որպես կողմ:

2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի նախագահի և նախագահի տեղակալի գործով (գործ Հ.ՔԳՀ-43/02) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչ ՀՀ դատախազությունում և ՀՀ դատարաններում:

   Գործի առիթ է հանդիսացել Ազգային ժողովի պատգամավորների՝ «Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» ԱԺ որոշում ընդունելուն ուղղված նախաձեռնության շուրջ ծագած վեճը: Նախագծի հեղինակները հայտարարում էին, որ ԱԺ նախագահը նախագիծը առանց քվեարկության չի ընդգրկել եռօրյա նիստերի օրակարգում և չի ապահովել հարցի արտահերթ քննարկումը:

3. ՀՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարի վարչական ակտի (խաղաղ հավաքների իրավունքը սահմանափակող՝ քաղ. գործ 2-2689) օրենքին հակասելու գործով դիմողի ներկայացուցիչ ընդհանուր իրավասության դատարաններում:

   Այս գործով վիճարկվել է մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար 30.12.2000թ «Համակարգի թատերահանդեսային կազմակերպությունների դահլիճների գործառության մասին» № 542 հրամանի իրավաչափությունը, որով արգելվում է դահլիճներ ունեցող կազմակերպություններին իրենց տարածքները վարձակալության տրամադրել միայն քաղաքական կուսակցություններին իրենց համագումարները (ցանկացած հանդիպում) անցկացնելու համար: № 542 հրամանի ընդունելու իրական դրդապատճառը քաղաքական այլախոհների գործունեությունը սահմանափակելն էր:

4. Արմեն Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով իրավախորհրդատու (գանգատ N 6562/03 A. Mkrtchyan v Armenia):

   Այս գործը Հայաստանի մասնակցությամբ առաջին գործ է, որով Եվրոպական դատարանը վճիռ է կայացրել. ճանաչվել է դիմողի խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտման փաստը: Վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները հիմք հանդիսացան հետագայում

քննված գործերում արված եզրահանգումների համար: Իշխանությունները միտինգներ անցկացնելու կարգը խախտելու համար հազարավոր մարդկանց 2001-2005թթ ենթարկել են վարչական ազատազրկման: Այս գործով հաստատվեց, որ կարգը, որն իբրև խախտել են մարդիկ՝ Հայաստանի իրավական համակարգի մաս չի կազմում, և դրա խախտման համար պատասխանատվությունը զուրկ է իրավական հիմքից:

Այս գործով Կառավարությանը առաջադրված հաղթական հարցի հեղինակը, որին Կառավարությունը ի զորու չեղավ պատասխանել՝ Արտակ Զեյնալյանն է:

5. Արշամ Գալստյանի, Լևոն Երիցյանի, Գայանե Աշուղյանի, Լավրենտի Կիրակոսյանի (երկու գործ), Ժորա Սափեյանի (երկու գործ) Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված գործերով (խաղաղ հավաքների իրավունքի, արդար դատաքննության իրավունքի խախտում և այլն) իրավախորհրդատու (գանգատներ № 26986/03 GALSTYAN v. Armenia, № 33268/03 ASHUGHYAN v. Armenia, №. 31237/03 և №. 24723/05 LAVRENTI KIRAKOSYAN v. Armenia, № 35738/03 և № 23191/05 ZHORA SAPEYAN v. Armenia)
6. Մուրադ Բոջոլյանի Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված գործով (արտահայտվելու ազատության իրավունքի խախտում) իրավախորհրդատու (գանգատ № № 23693/03) MURAD BOJOLYAN v. Armenia: Նույն անձի՝ (գանգատ № 18339/09) MURAD BOJOLYAN v. Armenia գործով գոհի ներկայացուցիչ ՄԻԵԴ-ում:
7. Դիլանյանի իրավահաջորդների Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացրած գանգատի (կյանքի իրավունքի խախտում և այլն) կազմման աշխատանքային խմբի փորձագետ (գանգատ No.45473/04 Dilanyan v. Armenia)
8. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի լուծարման գործով դիմող:

ՀՀ Նախագահի 04.01.2006թ «Հանձնաժողով ստեղծելու մասին» ՆՀ-1-Ա հրամանագրով ստեղծված հանձնաժողովը փաստացի դադարեցրեց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեությունը, զրկելով մարդկանց պաշտպանության սահմանադրական այդ միջոցից օգտվելու հնարավորությունից: Ա. Զեյնալյանը վիճարկեց այդ հրամանագրի իրավաչափությունը:

9. Ընտրական իրավունքի պաշտպանության տասնյակ գործերով դիմող և դիմողի(ների) ներկայացուցիչ ՀՀ առաջին ատյանի դատարաններում. վճիռներից մի քանիսը, որպես նախադեպ հրապարակվել են «Ընտրական վեճերը Հայաստանի Հանրապետությունում» գիտագործնական ձեռնարկում, հեղ. Հրայր Թովմասյան, Գրիգոր Մուրադյան, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2007թ:
10. Գեղեցիկ Ղանդիլյանի սպանության գործով դատապարտյալ, այնուհետև արդարացված և քրեական գործով տուժող Արմեն Պողոսյանի ներկայացուցիչ դատարանում:

Արմեն Պողոսյանը մեղադրվել և դատապարտվել էր 15 տարվա ազատազրկման 1999թ անչափահաս Գ. Ղանդիլյանին բռնաբարել և սպանելու համար: Պողոսյանը հանցագործությունը կատարելու մեջ խոստովանել էր կտտանքների ազդեցության տակ: Հինգ տարի վեց ամիս պատիժը կրելուց հետո արդարացվեց՝ իրական հանցագործին հայտնաբերելու հիմքով:

Եվրոպական դատարանը Պողոսյանը և Բաղդասարյան ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ № 22999/06) ճանաչեց Արմեն Պողոսյանի իրավունքների խախտման փաստը:

11. 2004թ ապրիլի 12-ի լույս 13-ի Երևանի կենտրոնում տեղի ունեցած դեպքերի ժամանակ տուժած քաղաքացիների իրավունքի պաշտպանության գործով

ներպետական իրավական պաշտպանության ընթացակարգերի սպառում և Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան գանգատի ներկայացում (գանգատ № 13056/05 ARTAK HAYKAZ ZEYNALYAN v. Armenia):

12. Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04) ՄԻԵԴ 18.06.2008թ վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայման, ՄԻԵԴ դատարանի վճռի պարզաբանման վարույթում, Նախարարների կոմիտեում Վճռի կատարման նկատմամբ վերահսկողության վարույթում ներկայացուցիչ: Նույն գործով ՀՀ Սահմանադրական դատարանում Մելտեքս ՍՊԸ-ը ներկայացուցիչ:
13. 1999թ հոկտեմբերի 27-ի գործով տուժողի, 2008թ մարտի 1-ի զոհերի (թվով՝ 9 սպանված), 2010 թ. Չարենցավանի ոստիկանությունում մահացած Վահան Խալաֆյանի իրավահաջորդների ներկայացուցիչ դատախազությունում ու դատարաններում և այլն:
14. Դատավորներ Սամվել Մնացականյանի, Սուրիկ Ղազարյանի, դատավորի օգնական Արմեն Խառատյանի ներկայացուցիչ դատարաններում (ՍԴՈ-966, ՍԴՈ-1063):
15. Դատավոր Անահիտ Սաղաթելյանի Եվրոպական դատարանում քննվող գործով իրավախորհրդատու:
16. ՀՀ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով դիմող (16.11.2006թ ՍԴՈ-665):

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-665 որոշման հիմքում ընկած դիմումը Հայաստանի պատմության մեջ օրենքի սահմանադրականությունը վիճարկելու առաջին անհատական դիմումն է:

Այս հոդվածը վերաբերվում էր պետական մարմինների ակտերի դատական կարգով վիճարկելու հարաբերություններին: Դատարանները հրաժարվում էին քննության ընդունել ՀՀ Նախագահի և Կառավարության կողմից ընդունված ակտերի իրավաչափությունը վիճարկող հայցերը՝ հղում կատարելով այդ հոդվածին: Սահմանադրական դատարանը Ա. Զեյնալյանի դիմումի հիման վրա 16.11.2006թ ՍԴՈ-665 որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց ՀՀ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ:

Այդ պահից սկսած դատարանները մատչելի դարձան մարդկանց համար Նախագահի և Կառավարության որոշումները վիճարկելու գործերով:

17. ՀՀ Սահմանադրական դատարանում ՀՀ Ազգային Ժողովի 2003 թվականի մեծամասնական ընտրակարգով թիվ 03; 18; 20; 31 ընտրատարածքներում ընտրությունների արդյունքների, ՀՀ Ազգային Ժողովի 2003 ու 2007 թվականների համամասնական ընտրակարգով ընտրությունների, 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկման գործերով, 2009 թվականի Երևան քաղաքի ավագանու ընտրությունների հետ կապված իրավական նորմերի սահմանադրականության հարցով դիմողների ներկայացուցիչ, դիմող և դիմողի իրավախորհրդատու (ՍԴՈ-424; ՍԴՈ-428; ՍԴՈ-432; ՍԴՈ-435; ՍԴՈ-436; ՍԴՈ-703; ՍԴՈ-734; ՍԴՈ-736; ՍԴՈ-803):

Այս գործներով Սահմանադրական դատարանի որոշումները, դրանցում բարձրացված իրավական խնդիրները, դրանց վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները ու տրված լուծումները վճռորոշ եղան Ընտրական օրենսդրության թերությունների վերացման և կատարելագործման համար: Ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգերը բարելավելը, 2011թ ընտրական գործընթացում մրցակիցների մամուլով քարոզչության հավասարակշռության ապահովումը մեծապես պայմանավորված է եղել Սահմանադրական դատարանի այս որոշումներով:

18. ՀՀ Սահմանադրական դատարանում մի շարք գործերով դիմող և դիմողների ներկայացուցիչ (ՍԴՈ-665, ՍԴՈ-719, ՍԴՈ-833, ՍԴՈ-844, ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-872, ՍԴՈ-918, ՍԴՈ-927, ՍԴՈ-942, ՍԴՈ-943, ՍԴՈ-984, ՍԴՈ-1010, ՍԴՈ-1052):

ՍԴՈ-719 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր դատավորների կողմից դրսևորվող անգործության՝ դատական կարգով վիճարկման օրենսդրական կարգավորումների բացակայության սահմանադրականությունը (իրավական բացի խնդիր):

ՍԴՈ-833 որոշման հիմքում ընկած 3 դիմումներով բարձրացվել էին Եվրոպական դատարանի վճիռների զուգահեռ ազդեցությունը բացառող իրավանորմերի սահմանադրականության հարց: Դատական նիստի ընթացքում բանավոր կերպով կայացված որոշումներով կիրառված օրենքի դրույթների Սահմանադրական դատարանում վիճարկելիության հարց: Փաստաբանի լիցենզիա չունեցող իրավաբանի կողմից Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական վերջնական դատական ակտի վերանայման վարույթ հարուցել և այդ վարույթին մասնակցելն արգելող իրավանորմերի սահմանադրականության հարց: ՍԴՈ-833 որոշումով հիմնադրվեց միջազգային դատարանի դատական ակտերի զուգահեռ ազդեցության ինստիտուտը, որը դեռևս չկա Եվրոպական կոնվենցիայի անդամ երկրներում:

ՍԴՈ-844 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր քրեական վարույթի ընթացքում նախաքննական մարմնի կողմից ցուցաբերված հնարավոր անգործության դեմ անմիջական դատական պաշտպանության հնարավորության բացակայության սահմանադրականությունը: ՍԴՈ-844 որոշումով անձինք հնարավորություն ստացան անմիջականորեն դատարան բողոքարկել քրեական վարույթի ընթացքում նախաքննական մարմնի կողմից ցուցաբերված հնարավոր անգործության իրավաչափությունը:

ՍԴՈ-871 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր մեղադրյալին (կամ ամբաստանյալին) արդարացնելու օրենքի այն հիմքը, որով համոզմունք էր թողնում հանրության մոտ, թե հանցագործությունը կատարել է հե՛նց այդ անձնավորությունը, սակայն քրեական հետապնդումն իրականացնող մարմինը չկարողացավ անհրաժեշտ ապացույցները գտնել: ՍԴՈ-871 որոշման արդյունքում հակասահմանադրական և անվավեր ճանաչվեց այդ իրավակարգավորումը:

ՍԴՈ-872 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր քրեական դատավարական օրենքի այն նորմը, որը հնարավորություն էր տալիս տապալված մեղադրանքը փրկելու նպատակով գործը դատարանից կրկին տանել նախաքննությանը բնորոշ ոչ հրապարակային քննչական գործողություններ իրականացնել: ՍԴՈ-872 որոշման արդյունքում, լուծվեց խնդիրը և բացառվեց այդ իրավակիրառական պրակտիկան:

ՍԴՈ-918 որոշման հիմքում ընկած դիմումով բարձրացվել էր դատավորների անաչառության նկատմամբ կասկածի, այդ հիմքով ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու, այդ կապակցությամբ կայացված որոշումը անբողոքարկելի լինելու իրավակարգավորումների սահմանադրականության հարց: ՍԴՈ-918 որոշմամբ Սահմանադրական դատարանը կարևոր իրավական դիրքորոշումներ արտահայտեց, որոնք ընդարձակ օգտագործում են գտել:

ՍԴՈ-942 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր վարչական դատավարությունում պետական մարմինների անգործությունը վիճարկելու օրենսդրական արգելքի սահմանադրականությունը: ՍԴՈ-942 որոշումից հետո վարչական դատարանները սկսեցին քննության առնել պետական մարմինների անգործության դեմ բերված հայցերը:

ՍԴՈ-943, ՍԴՈ-984 որոշումների հիմքում ընկած դիմումներով վիճարկվում էր Սահմանադրական դատարանի որոշումների և Եվրոպական դատարանի վճիռների կատարմանը խոչընդոտող դատավարական նորմերի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը այս որոշումներով հանգուցային իրավական դիրքորոշումներ արտահայտեց, մի քանի նորմեր Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց, ինչպես նաև Ազգային ժողովին մատնացույց արեց այն ուղենիշները, որոնց պետք է համապատասխանեցվեն դատավարական օրենքները: Ազգային ժողովը արմատական փոփոխություններ կատարեց Սահմանադրական դատարանի որոշումների և Եվրոպական դատարանի վճիռների կատարման դատավարական ինստիտուտներում:

ՍԴՈ-1010 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր գործադիր իշխանության մարմնի՝ նախարարության, կողմից պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը գաղտնի հրամանով իրականացնելու օրենքով տրված իրավասության սահմանադրականությունը: ՍԴՈ-1010 որոշումով սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեց այդ դրույթները: Այս որոշումով հանգուցային իրավական դիրքորոշումներ է արտահայտել Ազգային ժողովի կողմից՝ անձանց իրավունքները սահմանափակող օրենք

չհանդիսացող ակտերով (գործադիր իշխանության մարմինների ակտեր) մարդու իրավունքները սահմանափակելու իրավասություններ տալու վերաբերյալ:

ՍԴՈ-1052 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր քրեական դատավարական օրենքի այն իրավակարգավորումները, ըստ որի դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը մեկնարկում էր այդ ակտի եզրափակիչ մասը հրապարակելու պահից և ոչ թե ակտի տեքստը ստանալու պահից (այդ երկու ժամկետները պրակտիկայում միմյանցից կարող էին տարբերվել մինչև 7 օրով, այն դեպքում, երբ որոշ որոշումներ բողոքարկելու ժամկետը 3, 5 կամ 10 օր էր): Վիճարկվում էր նաև այդ դեպքերում բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու իրավակարգավորման սահմանադրականությունը: ՍԴՈ-1052 որոշումով սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեց այդ դրույթները:

## 19. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» դիմումի հեղինակ (ՍԴՈ-923)

ՍԴՈ-923 որոշման հիմքում ընկած դիմումով վիճարկվում էր քրեադատավարական այն նորմի սահմանադրականությունը, որը հնարավորություն էր տալիս նախաքննության մարմնին մեղադրյալին լուսանկարով ճանաչման քննչական գործողություն իրականացնել՝ այն դեպքում, երբ վերջինս գտնվում է նախաքննություն մարմնի իրավազորության ներքո և այլընտրանքային լուսանկարները ձեռք բերել առանց դրանց տերերի համաձայնությունը ստանալու: Այս իրավակարգավորումը և ձևավորված իրավակիրառական պրակտիկան հանգեցնում էին չարաշահումների: Արձանագրված են դեպքեր, երբ կասկածյալի լուսանկարով նախ իրականացվել է ճանաչման քննչական գործողություն՝ առանց պաշտպանի մասնակցության, այնուհետև իրական մեղադրյալի մասնակցությամբ: ՍԴՈ-923 որոշումից հետո, դեռևս իրավակիրառական պրակտիկան ընթանում է սահմանադրական դատարանի մատնանշված ուղիով:

## 20. Վարդան Խաչատրյանի, Լևոն Բարսեղյանի վնասի փոխհատուցման գործերով ներկայացուցիչ

Այս ստրատեգիական դատավարության նպատակը սահմանադրական դատարանում գործը շահելուց հետո դատական ծախսերի փոխհատուցման պրակտիկայի, ներկայացուցչի (փաստաբանին) վարձատրության պարգևավճարի ներդնում էր, ոչ նյութական (բարոյական) վնասի իրավական ինստիտուտի բացակայության սահմանադրականության վիճարկման համար հարմար («լավ», « բարենպաստ ») գործի նախապատրաստումն է:

Այս փոփոխությունների հիմքերը վերևում ՍԴՈ-833 և ՍԴՈ-1383 գործերնն են: Հաջողվեց դատական կարգով ամրագրել Ազգային ժողովի և դատարանների մեղքը՝ սահմանադրությանը հակասող օրենքի ընդունման և այդպիսի օրենքի կիրառման համար: Հաջողվեց հասնել այն բանին, որ դատարանները Ֆինանսների նախարարության, մյուս դեպքում՝ Ոստիկանության վրա դրեցին Վարդան Խաչատրյանի և Լևոն Բարսեղյանի կրած ամբողջ դատական ծախսերը փոխհատուցելու պարտականությունը, հաջողվեց ստեղծել հարմար («լավ», «բարենպաստ») գործեր Սահմանադրական դատարանում բարոյական վնասի հատուցման ինստիտուտի բացակայության սահմանադրականությունը վիճարկելու համար:

Վարդան Խաչատրյանի գործով առաջին անգամ հաջողվեց իրականացնել դատարանում վիճելի գույքային պահանջի ժառանգում (դատարանում գործի քննության ընթացքում Վ. Խաչատրյանը մահացավ, սակայն նա չուներ որևէ գույք, որպեսզի ժառանգությունը ընդուներ նրա ժառանգը. Իրականացվեց գույքային պահանջի ժառանգում):

Ծանոթություն: Գործերի զգալի մասն իրականացվել են իրավապաշտպան Արայիկ Ղազարյանի հետ համատեղ:

Արտակ Զեյնալյան

14.04.2022թ, ք. Երևան

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով Դատական դեպարտամենտին տալիս եմ համաձայնություն իմ վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին:

_____________________
*անուն, ազգանուն*

_____________________
*ստորագրություն*

« » 15.04. 2022թ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____________________, սույնով հայտարարում եմ, որ Վճռաբեկ դատարանի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար իմ կողմից ներկայացված հայտում առկա տեղեկությունները և կից փաստաթղթերը հավաստի են:

_____________________
*անուն, ազգանուն*

_____________________
*ստորագրություն*

« » 15.04. 2022թ.

Արդշինբանկ ՓԲԸ

Վճարման հանձնարարական N 220415204250090 5436_914

15/04/22 15/04/22 16:43:17 F209

| | | |
|---|---|---|
| Դեբետի հաշիվ | 2479001375450020 / 30220 | Գումար և արժույթ |
| Վճարողի բանկ | AM24700 AM24700 Արդշինբանկ ՓԲԸ | |
| Վճարողի ԱԱՀ կամ անվանում | ՁԵՅՆԱԼՅԱՆ ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ [illegible]<br>1909690309 ԵՐԵՎԱՆՀՐ. ՔՈՉԱՐԻ [illegible] | |
| ՀՎՀՀ/ՀԾՀ | | 20,000.00 |
| Հիմնական պարտ ԱԱՀ կամ անվանում | Արտակ Զեյնալյան | |
| Հիմնական պարտ ՀՎՀՀ/ՀԾՀ | 1909690309 | AMD |
| Կրեդիտի հաշիվ | 900005163671 | |
| Ստացող (Շահառուի) բանկ | AM90000 ՀՀ էկոնոմ.եվ ֆինանս.նախարարություն | |
| Ստացողի (Շահառուի) ԱԱՀ կամ անվանում | Դատավորների թեկնածությունների ցու ցակի համալրման որակավորման | . |
| Ստացողի (Շահառուի) ՀԾՀ | | |
| Գումարը և արժույթը բառերով | Քսան հազար ՀՀ դրամ | |
| Վճարման նպատակ | Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվե լու համար առաջխաղացման ենթակա դատավ որների թեկնածությունների ցուցակի հա մալրման նպատակով. Արտակ Հայկազի Զեյ | |
| Միջնորդավճար | 0.00 | |
| Շահառուին վճարման | | |

Կ.Տ. Վճարողի ստորագրություն 1.________________ 2.________________

Կատարողի ստորագրություն ը ԱԱՀ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
02566492 MOBILE

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի ______________ Արտակ Հայկազի Չեյնալյանը ____________________
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ՝ ____________ տրված՝ [illegible] կողմից
/սերիա, համար/ /ամսաթիվ և ում կողմից/

բնակչության պետական ռեգիստրի տվյալներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այլ երկրի քաղաքացիության վերաբերյալ ԲՊՌ-ում նշում առկա չէ:

**ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ**
**Ա. Մկրտչյան**

_______________
/ստորագրություն/

Կ.Տ

«12» 04 2022թ.

N 8-26203